

Տարեկան գինը 10 րուբլ. կէս տարվանը 6 րուբլ.
Առանձին համարները 5 կոպէկով:

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մը:

(Ստորագրողները գրվում են ուղղակի
Դպրատ. Բեռնարդ. Մուսաթ.)

ՄԵՆԿ

Խմբագրատունը բաց է առաւօտան 10—2 ժամ
(հացի կերակի և տոն օրերին):

Հայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով:

Հայտարարութիւնների համար վճարում են
կերպանչիւր ըստ 2 կոպէկի:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Եկեղեցական կալուածները—էր քին տե-
սութիւնը Նամակ Նրանից: Նամակ Պետրովս-
կից: Նամակ Սալեանից:—Արտաքին տեսու-
թիւն: Անգլիական պարլամենտը: Թիւրքիա: Ֆը-
րանսիա:—Մշակիչ հեռագիրներ:—Յայտարարու-
թիւններ:—Բանասիրական: Հին-Բայազէտի
արդի վիճակը:

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԿԱԼՈՒԾ- ՆԵՐԸ

Արքան անհոգ է մեր եկեղե-
ցական իշխանութիւնը իր կա-
լուածների վերաբերութեամբ, ա-
պացուցանում է հետեւեալ իրո-
ղութիւնը:

Մեզ հաղորդում են, որ Ղա-
րաբաղում կան ահագին եկեղե-
ցական կալուածներ, մօտ 150,000
դեսիատին հող, թէ վարելահողեր
և թէ անտառով ծածկած տե-
ղեր, որոնք անհոգ թողված են
չափ և չափ տարիներ:

Իներ Բաղդասար միտրոպոլիտի
ժամանակ և նրա ջանքերով այդ
հողերը ձեռք է բերել հայոց եկե-
ղեցական իշխանութիւնը և յատ-

կացրել է այդ կալուածների ար-
դիւնքը Հուշու հոգեւոր-ազգային
հայոց դպրոցին:

Բայց մինչև այժմ նախանշի
մէջ այդ ամենահարուստ հողերը
ոչինչ արդիւնք չեն տուել հոգեւոր
դպրոցին: Այդ բաւական չէ. հո-
գեւոր իշխանութիւնը, կամ Հու-
շու հոգեւոր դպրոցի հոգաբար-
ձութիւնը չէ էլ հոգացել օրինա-
ւոր կերպով դպրոցի անուանը
հաստատել տալ այդ հողերը, չէ
էլ մտածել կառավարիչ նշանակել
իր հողերը կարգի բերելու և կա-
ւաւարելու համար:

Իսկ այժմ, լսում ենք, որ այդ
հողերը դատի տակ են ընկնում:
Երկու խոշոր կալուածատէրեր,
որոնցից մինը մի հարուստ թուրք
է, նոյնպէս կառավարութիւնը
հանդէս են դուրս գալիս, յայտ-
նելով իրանց իրաւունքը այդ հո-
ղերի մեծ մասի վրա:

Ահա ուրեմն որտեղ է հասնում
մեր հոգեւոր իշխանութեան ան-
հոգութիւնը. այդքան տարի նա
տիրապետում էր այդ հողերը, մի-

կողմից առանց նրանցից իր հա-
մար որ և է օգուտ քաղելու, իսկ
միւս կողմից չէ կարողացաւ մին-
չև անգամ օրինաւոր ճանապար-
հով հաստատել տալ իր վրա յի-
շեալ կալուածները:

Եւ այժմ, երբ արդէն դատ է
սկսվում կալուածների մի մասը
հոգեւոր իշխանութեանը անշատե-
լու նպատակով, երբ արդէն եր-
կրաշար իր գործը սկսել է, երբ
դատաստանական ըննիչը տեղա-
կան ընակիչներից, որպէս վկանե-
րից ցուցումներ է հաւաքում,—
Այժմիս հոգեւոր իշխանութիւ-
նը, կամ Հուշու հոգեւոր դպրոցի
հոգաբարձութիւնը մինչև այժմ
չեն մտածում մի հաւատարմատար
նշանակել իրանց կալուածական
իրաւունքները պաշտպանելու հա-
մար, չեն էլ մտածում օրինաւոր
կալուածական թղթեր ձեռք բե-
րելու...

Ահա, այսպէս է ամեն բանում
մեր հոգեւոր իշխանութեան ան-
հոգութիւնը դէպի իր իրաւունք-
ները և դէպի այն պարտականու-

թիւնները, որ նա ունի ազգի վե-
րաբերութեամբ:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԵՐԵՒԱՆԻՑ

Մայիսի 15

Արագրութիւնը աղէտներ չ'որ է յայտնում, որ
մեր թշուառ թուրքիայի հայերը քաղցածութեան
ձեռքին գերի են գնում, իսկ մեր հաստափոր ա-
ղաների և մեր տիկիների անտարբերութիւնը և
քարատրտութիւնը այդ նուիրական գործին չ'օգ-
նելու համար, պէտք է վերաբերել դոյն մտնելու
յին սրտեր ունենալուն: Եթէ ապագայ լեռնա-
նէր չ'նշաւոր ստարկայ, անշուշտ անտարբեր չ'էր
մնայ օգնութեան ձեռք մնկնելու ուղի ձեռքին գե-
րի եղող արարածներին: Բայց նրանց ինչ փոյթ.
հաց էլ ունեն, փոյթ էլ, ուրեմն և նոյն համար
փոյթ չէ, որ իրենց համարին եղբայրները և քո-
րերը քաղցի ձեռք մտնում են:

Տարեք, տարեք աղաներ և խոսնումներ, տա-
րեք ձեռք հետ այդ ձեռք ունեցած ոսկին և ար-
ծաթը, մտածե՛ք, զուգէ կարողանա՞ք դորանցով
երկնային փառքից մի մասը գնել: Բայց հաւատա-
ցե՛ք, որ ձեռք ունեցած ոսկին և արծաթը պէտք է
մաշեն և ցեցի պէս ապականեն ձեր մարմինը և
հոգին:—Որովհետև ձեր եղբայրը քաղցած էին և
չ'ը կշտացրէր, մերկ էին և խնայեցիք ձեր հան-
դերձների լաթերով գոնէ ծածկել ձեր համարին-
ների մերկութիւնը, չ'ը կտարեցիք ոչ աւետա-
րանական և ոչ մարդկային պարտականութիւ-
ները: Որովհետև վշտացածներին օգնութիւն հա-
սելու համար, դուք, պ. խմբագիր, աւելի չուտ կա-

չ'ը կարելով օրոշել, աղերսաբան խնդրադրով
տեղիս կառավարութեան սիրտը հաղել կրցաւ ի
գութ շարժել: Տէրութիւն հաւաքած տասնորդի
ցորենով փութ մը բանալ հրամայեց, նախապէս
Փոնտը 5 կոպէկ սակարկութեամբ անցաւ, մի
երկու ամիս այսպէս, եթէ ցվերէլ այս գոծակ լի-
նէր, շատ լաւ դրութեան մէջ էր Բայազէթը:

Բայց սովը օրըստօրէ աստիճանաւոր, փութ դուռը
անհամար ժողովուրդ սկսաւ հաւաքել: Կը բնիս
որ հաւ վերակացուի անուր զգելով և տախիքի
ցոյց տալով, կաղաղակին զի մէր Աստուծոյ, ձե-
ծերը անօթի մեռան... սակայն, կէսն դատարկա-
ձեռն և ունայն ետ կը դառնան: Քանզի օր 15
պուղ սահմանուած է որ դուրս հանուի և աւելի
չ'ը լինի, որով օրէ օր հաց առնող աւելնալով և
հացն ալ չ'ը բաւականաւոր, նորէն կառավարու-
թեան զինեցին: Բայց այս անգամին հայոց դար-
ձեալ դժբաղդ նստաւ, որովհետև վերակացու կար-
գադրեց տեղիս ոստիկանութեան տեղապահ Սեա-
րի Մէմէթ անուն պաշտօնական անձը, եկաւ
այս անձը փութ դուռն կայնած ամբարի մէջ
ինչպէս իւր անունէն յայտնի է չէլ դէմքով հուր
կը ցայտէր հայոց գլխին և սարսափելի ձիւ
բառնալով, կը սարսեցնէր անթութեամբ նուա-
ղեալ հայու սիրտն և փառապանի թմբկով Մեմէթ
զա վերջը, հալա զավուրար դուրստուն, դեռ
Մահմդի ժողովուրդն տուեցէք, զավուրները թող
մնան, հրամայեց կը կարգար, որով հացի կար-
տութիւն չ'ունեցող թուրքեր առատաձեռն ետ կը
դառնային, առած հացի Փոնտը կը ծախէին 20
կոպէկ ճարահատեալ հայոց մի հացի դիւր կը
տանէի փոռէն 4 հաց առնելով:

Բայց հայերը, որոնք 95%-ը գոզցես կտ և ու-
նայն դառնալով, թախծեալ և տրտում իրարու
կընեն, թիւսպէս ընենք, Աստուած հոգիներ չառ-
նուր, որ աղատուիր, հիմա ձգելի աչքը մեր բա-
նապարհն կը լան, որ հաց տանենք, էս օր էլ բա-
նաց մնացնեք, ոչ եղ կայ, ոչ բրինձ և ոչ ձաւար,
որ մէկ զրգալ ապուր չ'ինենք և ուտենք, այլ օրը

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՀԻՆ-ԲԱՅԱԶԷՏԻ ԱՐԴԻ ՎԻՃԱԿԸ

Դուրսութիւնը ինձ համար ընտրելի ունակութիւն
մը էր, թէ ինչ արկած և պատահար և կամ թէ
ինչ բարեբաղդութիւն և բերկրաւոր միջոց կը
պատահէ մեր երկրի և ազգութեան, ծուլութեան
անկողնու մէջ նստած անտարբեր աչք կը դիտեմ,
բայց այս անգամ հազիւ սթափեցայ, հազիւ աղ-
ղու խթան մը զիս գարթոյց մեր երկրի դառն և
անտանելի վիճակը, և աւելի նու ըսելով, վերջին
աղէտի ճգնաժամի մէջ քաղած ինքնութիւնս մեր
ազգայնոց հաղորդիչու, գէթ անտեղեկ չ'ը մնալը
մեր ազգի առաջին, յուսալով միանգամայն որ պի-
տի արժանանալ մեր ազգայնոց այն անհատնե-
րու ուշադրութեան, որ կը բարեհաճին տեսողու-
թեան տակ ձգելի այս աղիտրով և արտաուածո-
չալ տողերը: Ի գո՛ւթ և կարեկցութեան պիտի
չ'արժանի դէպի իւրեանց ժողովրդը, մայրերը, եղ-
բայրները, որք անտանելի և դառն վիճակի մէջ կը
հեծին և կը տառապին, և յուսալով միանգամայն
ձեռք ազգօրդու լրագրողը ազնիւ զգացման, որ չ'ը
պիտի զանաք հերքաւորել մեր նստակն ձեռք պա-
տական թերթի անկիւնում:

Վայը, աւաղը, թշուառութիւնը և ամեն տեսակ
անտանելի վիճակը և դառն հարստահարութիւնը,
զոգցեն միայն Բայազէթին յատկացեալ է. ծակա-
տաղիրը՝ զոգցեն ամեն տեսակ արկածները և ա-
ղէտները, վիշտը և չ'ը տեսնուած կենսադարաւ պա-
տահարները և դառն երկունքը Բայազէթին սահ-
մանած է:

1877-որդ թւականի թուրք-օսմանական վերջին

պատերազմի միջոցին Բայազէթի հայ-ազգայնա-
կութեան աւարառութիւնը, սպանութիւն, տեսակ
տեսակ կոտորած և եղբունադուրսութեամբ իւր
արեան մէջ թաւալումը և ներկուրը, խայտառակ
և մերկ կերպով այր և կին, ծեր և տղայ, օրիորդ
և երիտասարդ՝ իւրեանց դահճաց ձեռքով և իւ-
րեանց սպանողաց խորազանցներով լեռներէն, ձո-
րերէն գերեզմարելով, բռնի տարա հող ի Պարս-
կաստան սարսորութիւն, և անը 3-400 մարդ տար-
րինակ կերպով թաղուած շատերուն յայտնի եղան
և շատերու աչքերէն արտասր քամաց:

Ասոնք բազմի կարկտի տարափ մ'էր անցաւ,
գնաց ըսելով և մեր ազգի նպատակին հակառակ
չ'ը վարուելու դիտմամբ, նստանք մեր արեամբ
ներկուած հողի վրա և մեր տրեամբ ներկուած
քարերը կը դիտենք, մեր արեամբ ներկուած տան
յատակի վրա անտարբեր հողով կը խորհանք,
յոյս ունենալով թէ ազատութիւնը և հարստահար-
ութեանց վերջը մտաւորուտ է, բայց նորէն բազ-
մի մի սարսափելի և անտանելի վիճակի մը ալ
ենթարկեց զմեզ, որով առաջինը մոռցանք, որով
չ'առեալ երանի կը կարդան այն կողպուման, չա-
տերը երանի կը կարդան այն գերեզմարութեան և
քաղած այն դառն ժամերուն, շատերը երանի կը
կարդան անոնց, որոնք իրենց լերդերը ողջ ողջ ի-
րենց օրտերէն դուրս հանուած տեսան իրենց
դահճաց ձեռքերում, անոնք որոնք իրենց արեան
մէջ ողորկեցան և ներկեցան:

Գիտեմ պիտի հարցանեն. ինչ է արդեօք այդ
վիճակը, կը պատասխանեմ վերահաս ռոտըր (այս
բառէն հոգին կը զոգայ) որ շատերի հոգին վիշ-
տուաւ, որ շատերու հոգին բերանը հասուցած է,
և բոլորի ալ արեւը ցածրեցնելով, իրենք դիրենք
գերեզմանի փոռերը կը նշարեն, ահա կողով-
փողը ի շատէ լուսարանել և կը խնդրեմ ձանձ-
րութիւն չ'ը լինի ընթերցողաց:

1879 թվ. վերջին կլիսուն ռոտըր իւր դարը
կլիսանցէր, իւրաքանչիւր ոք երկիւղ կրելով իւր
տարեկան հացը աւարել կուգէր, բայց ինչ քա-

կուր ստակ չ'ը գտնուիր և առուտուրը բոլորովին
դադրած Ստամբուլ օդում է, օրէ կաշխատիք,
օրէ կուտենք ըսելով, այս յուսով զինքն ապրած
կենթադրէր, և տէրութիւն ալ հակառակ իւր ա-
մեն տարուան սահմանադրութեան, տասնութը
կապառուաց (միւլթըզմ) չ'ը տալով, ինքն յա-
տուկ պաշտօնեաներ կարգելով, տասնութը ամ-
բարեց: Եթէ կապառուաց տրուէր, գոնէ շատն
քիչ իրենց տարեկան հացը կը ճաղէին, և օր ա-
ւելին է քան զամենայն, վաղարշակերտու հայ-ազ-
գայնութիւնը զաղթականութենէ նոր դարձ-
նելով և ցանկուտ սերմ չ'ը գտնելով, և ցանուածն
ալ երաշտութեան պատճառաւ որը բնաւ չ'ը դար-
ւ որը դեմամուկներ կտխելու աղազաւ, այն Բազ-
րանդու առատ և անպակասելի շտեմարանը դա-
տարի և պարսպ մնաց, որով ալ հաց ուտել ոչ
ոք չ'էր երազէր, քանզի կարողութիւն չ'ունէին
միայն մի քանի տուն հազիւ կրցան իրենց հացը
Պարկաւտանի Մալու դաւառում գնել, սակայն
իսկոյն արգելուեցաւ նոյն տեղի խաններէն ցո-
րեան դուրս ելնելը. մնաց Բայազէթին, որ Արճէ-
չէն տակաւ առ տակաւ կուգար, կը ծախուէր,
բայց այս ալ տեղիս թուրք ազգաբնակչութիւնը
նենդ թշնամութեամբ դաղտնի հանրապիր յղեց
(ինչպէս իւր գործն է միշտ) առ վաճառ կուտա-
կան, իւրու թէ Արճէչէն գաղած ցորենը ի Ռու-
սաստան կը փոխադրուի, որ և կուտանային Ար-
ճէչու ճանապարհն ալ աղիեց: Այս ալ մի դաւա-
ղութիւն և հայեր սովալուկ մահացնելու խոր-
հրդաւոր թակարդ, քանզի թուրքերը պատերազմի
ժամանակ հայոց ինչքը արդէն տիրած լինելով,
հարուստ էին առանց բացառութեան, որոնք
նախ քան զպատերազմն բոլորն գոզցես հայոց ծա-
նայ կը համարուէին, այսպէս մեր Բայազէթը
մնաց պաշարեալ դրութեան մէջ:

Բայազէթին այսպէս անորոշ դրութեամբ, ալի-
կոծեալ ուղկանու մէջ խորհրդայող ծփուելով և
իւր վերջը ինչ աստիճան դրութեան ենթարկուիլ

16 մայիս. Պարոյր Հայկունի

ինչու՞ կենանք մի այնպիսի կէտի վրա, որ
բացի յուսահատութենէն մի ուրիշ բան չէ
ներկայացնում: Սակայն ես բոլորովին յուսա-
հատված չեմ ապագայի համար, միայն թէ
կանգ առի այս կէտի վրա մի քիչ ժա-
մանակ, որ իմ ազնիւ բարեկամի մշտ-
բուն մի ուրիշ զաղափար գնեմ, նաև
հանգիստ նստող ազնիւ ըրլի մտքումը, որ
չափազանց յոյս չը դնեն տաճկաց կենտրոնա-
կան վարչութեան վրա ոչ թէ բանեցնելու վրա:
Թիւրքաց պետութիւնը այնքան զօրաւոր չէ,
որ կարողանայ իր կենտրոնի վրա ներգործող
մի ուրիշ տեղափոխելով, անցկացնել դէպի իր
ծայրերը, և ով որ ուզում է որ Փոքր-Ասիոյ
ողորմելի ժողովուրդի վիճակի մէջ բարեփոխ-
եալան բարենորոգութիւնը մտցնվէին, նա
պէտք է հանէ իր մտքից թէ ինչ կարե-
լի է անել: Կ. Պոլսի վրա ճնշում գործա-
դրելով, և առաւել ևս պէտք է փորձէ թէ
արթնութիւնով և հսկելով ինչ կարելի էր
անել Հէնց բուն այն տեղերում, ուր վարչա-
կան և միւս գիւղճու միւսք տեղի են ունենում,
և ուր որ հարստահարութեան առաջը կարե-
լի է աւելել: Ըստ որում տեղական պաշտո-
նաւոր էլ միւս մարդկանց պէն ենթարկված
են ազդեցութեան և կրից: Հիւսիսայիններն
տեղեկագրերը պէտք էր կարգով կանոնով ստեղծ
ստեղծ հրատարակել և լուսաբանել, հասարա-
կութեան ուղղորդութիւնը նրանց վրա հրա-
ւերել, այսպէս ներգործել տեղական պաշտոնե-
ութեան վրա և ես կարծում եմ որ այսպի-
սի միջոցներով ժամանակով և համբերու-
թեամբ կարելի է ժողովուրդի վիճակի մէջ շատ
բարեկարգութիւններ մտցնել: Սա, 'ի հարկէ,
մի ծանրաբայլ գործ է, բայց սրանից ոչինչ
փնտ չի ծագի, որովհետեւ մէջը վտանգ չը
կայ: Որպէս զի բոլոր բուժիչ միջոցները ներ-
գործող գտնվեն, պէտք է ժամանակ և
համբերութիւն: Եւ ազնիւ բարեկամն ասում
է, թէ ժողովուրդը բնաջնջ լինելու վտանգի
մէջ է և պէտք է մի տեղի սակաւ ծանրա-
բայլ միջոց հնարել: Սակայն մենք տեսնե-
թէ ինչպէս այն հսկայական միջոցները, որ
երկու տարի սրանից առաջ շատ մարդկանց
աչքին ամենայնաւ էին համարվում, ողորմելի
կերպով վերջացան ապարդիւն: Եւ հաւա-
սում եմ որ նորին կայսերական մեծութիւնը
անկեղծօրէն փափագում էր թիւթեացնել
Բալկանի ժողովուրդներին թշուառութիւն-
ները, բայց այն չբոլոր թշուառութիւնները,
որոնք նկատեց իմ ազնիւ բարեկամը, զիստա-
րապէս պատերազմի հետեւանք էին: (Լսեցէ՛ք,
լսեցէ՛ք): Եթէ ազգաբնակչութիւնը նուազած
է, որովհետեւ շատերը զինուորացորդութեամբ
հեռացվեցան որ տանեն ծառայատանի միւս
տեղերը պաշտպանեն: Եթէ կրկին և կրկին
անգամ հարկեր հանուեցան, նրա համար էր,
որ կառավարութիւնը զբաղի կարօտ էր և նրա
վարկը արժէքից էր ընկել: Այս բոլորը պատահե-
լ են իբրեւ Սօվիէտներին բաղձաբխի ապստամ-
բութեանց արդիւնք, և որովհետեւ թիւրքաց
կառավարութիւնը կորցրել է իր գաւառների
վրա ներգործելու ոյժը... Նա իշխում է այս
բոլոր բաները սոսկ նրա համար, որ հսկայա-
կան միջոցներ չը գործադրվեն այս մասին,
համոզված գտնվի, որ պատերազմի միջոցով
գնեց միայն: Եթէ ուզենանք մարդասիրական
նպատակներին հասնել արեւն թափելով, դա
մեզ կը տանէ այն սոսկալի հետեւանքին, որը
ցոյց տուաւ իմ ազնիւ բարեկամը, այսինքն
այն այլ և այլ ազգերի և կրօնքների բնա-
ջնջ լինելուն, որից բաղկացած է այդ ան-
բաղդ ժողովուրդը:

Արդայլի դուքն ասում է, թէ պետական մի
անգամ այս առարկայի վրա խօսելիս բաւա-
կան դժուարութիւններ կուենայ, որովհետեւ
միշտ կարելի է վիճարանութեան (debate)
ուղի ժամանակ մի բան ասել, որ խեղդ կարո-
ղանայ իմ ազնիւ բարեկամ արտաքին գործոց
պաշտօնէութեան քարտուղարի լուրջ կորհր-
դածութեան արգելք դառնալ: Եւ խոստո-
ւում եմ, որ ապաստում էի թէ ազնիւ մար-
կիզը (Սալարըրի) Նուրուզի և աշխարհի աչ-
քի առաջին մի աւելի ընդարձակ և յուսա-
լից հանգիստ կը բանար, քանթէ այն որ նա
ցոյց տուեց բնաջնջ լինելու վտանգը նկարա-
գրելով: Ազնիւ մարկիզը պէտք է մեզ ցոյց
տար, որ թիւրքաց կենտրոնական կառավարու-
թեան վրա ճնշում գործածելուց կարելի էր
բան յուսալ: Եւնչ է պատճառը, որ Հէնց մի
և նոյն բանը, որ իրանք անցեալ ժամանակ-
ներին զօրաւոր կերպով գործ էին դնում, Հիւսիս
նոյն բանը անգործացել է: Հիւսիս ազնիւ մար-
կիզը ոչ մի հնար չունի առաջարկելու:
(Լսեցէ՛ք, լսեցէ՛ք): Ազնիւ մարկիզը այս
տեղում մէջ ամեն անգամ որ բերանը բացե-
լ է, խօսքը դա է եղել թէ Նուրուզի ոչինչ չէ
կարող այս մասին անել: Եթէ Նուրուզի չէ
կարելի անել, եթէ Նուրուզի ոչինչ կարելի չէ
անել, ուրեմն ձգեմք այդ ազգը: Փարսի
դաշնադրութեամբ արամադրված էր, որ բու-
լոր պետութիւնները միահամուռ պէտք է
գործէին, իսկ Բերլինի դաշնադրութեան
համաձայն իւրաքանչիւր պետութիւն առանձ-
նօրէն կարող է գործել: Ահա սա էր այն
վտանգը, որ մեր ազնիւ մարկիզը էլ Բերլինի
աւագածողով 1878 թուի յուլիսի 2-ին
բերաւ այդ ազգի զինին: Այդ օրը Ռուսիան
աշխատում էր, որ մի որոշ յօդուածով պար-
տաւորէր պետութիւններին հսկել այն դաշ-
նադրութիւնը կառուելու, և նրա առա-
ջարկութիւնը ընդունելու թիւն գտաւ իշխան
Բիւսմարկի և Աւստրիոյ կառավարութեան կող-
ման: Այդ երեք պետութիւնք ուզում էին
որ այդ յօդուածը աւելացնվէր դաշնագրի
մէջ, բայց ազնիւ մարկիզը աշխատեց և նրա
աշխատութեանն ենք պարտական, որ Անգլի-
ան, Գաղղիան և Նոտայիան չը համաձայնվե-
ցան դրա հետ: Նա չուզեց այդ առաջարկու-
թիւնը պաշտպանել և մի անգամ ընթացք
բունց դրան չը համաձայնվելով: Նրա Ռու-
սիայ, Գերմանիա և Աւստրիա բռնել էին
այդ առաջարկութիւնը, դաշնից դուրս
եկաւ Անգլիան, Գաղղիան և Նոտայիան, և
ճաճկաստան էլ 'ի հարկէ չէզոքութիւն
ընտրեց: Սա այն քաղաքական տկարութեան
մէկ մասն է, որին հասաւ մեր կառավարու-
թիւնը—(լսեցէ՛ք, լսեցէ՛ք)—ապա ուրեմն և
կառավարութեան արտքն է Հիւսիս սկսել
Նուրուզի կառավարութիւնը միացնելու, որ
այն դաշնադրութիւնը կատարել տան: (Լսե-
ցէ՛ք, լսեցէ՛ք): Նրանք ցանկանում են դաշնա-
դրութիւնը իրադրծել տալ, բայց իբր թէ
մեծամեծ խօշորդուներ կան, որոնք այդպի-
սով են միմյան ազնիւ մարկիզի դոյտրի-
նակ անդադար ձառնելով, որ ամեն փորձ
չըթանում է, (օհ՛օ, օհ՛օ, լսեցէ՛ք, լսեցէ՛ք):
Եւ վստահացած եմ, որ ազնիւ մարկիզը
քաղաքական ներհակ միայն մէկ հատ յոյս
կայ ճաճկաստանի բնակչաց փրկութեան հա-
մար թէ Նուրուզի, թէ Նախալում, և այդ
յոյսն էլ նա է, որ միացեալ մեծ պետու-
թիւնները ճնշեն Կ. Պոլսի կենտրոնական
կառավարութեան վրա: Ամեն որ գիտէ որ
փաշաները նահանգներն են ուղարկվում
ամենանոստ շարժառիթների համար, և
պետութիւնները կարող են նրանց վրա ազ-
դել միմյան կենտրոնական կառավարութեան
միջոցով. և ես քաջայայտ եմ, որ իմ ազնիւ
բերեկամը (ըրլ Գրէնվիլ) կը լաջողի Նու-
րուզի պետութիւններին միացնելով պէտք
եղածն անելու (լսեցէ՛ք, լսեցէ՛ք):

Ամբրսէտի դուքն ասաց թէ շատ կու-
գեմ իմանալ աւելի պարզ ու որոշ թէ ինչ
տեղ է ձնշում: Ասում էին թէ սուլթանը
շատ ուրախացել էր Անգլիոյ մէջ կառավա-
րութեան փոխելովը, որովհետեւ նա գիտէր,
որ սպառել էր ազնիւ մարկիզի համբերու-
թիւնը, և գիտէր որ իմ ազնիւ բարեկամ ար-
տաքին գործոց քարտուղարը մի շատ սիրելի
և մեղմասիրտ ազնիւ անձն է, և Հէնց այդ

պատճառով կարելի է որ մի երկու տարին էլ
պարապ անց կը կենայ, մինչև որ նրա հա-
մարութիւնն էլ կը ապագայ: Նա մի մաս-
նաւոր դեպքան է ուղարկել Կ. Պոլս, բայց
նրա բոլոր արածը դա էր, որ մի տեղակազիր
է ուղարկել:

Բէտհի մարկիզն ասում է, եթէ բաւական
ձնշում գործածվի մեծ պետութեանց կող-
մից սուլթանի վրա, բարենորոգութիւնը կի-
րագործվեն: Եւ այդ ձնշումը կարող է մի-
այն ոյժ (force) բանեցնելով լինել, թէ և ես
չը գիտեմ թէ ինչ կերպով պէտք է բա-
նեցնել այդ ոյժը: Սակայն ես գորան էլ հա-
մոզված եմ, որ մինչև որ հիւսիսայինները
մեծամեծ զօրութիւններ չունենան, նրանց
բոլոր աշխատութիւնները զուր կը լինեն:
Բայց եթէ նրանց պահանջները միացած կը
լինեն ուժեղ զօրութեան հետ, այն ժամա-
նակ նրանք արդիւնք կը տեսնեն:

ԹԻՒՐԿԻԱ

Հայոց խնդրի վերաբերութեամբ «Հաւաստի
ընկերութեան» յունիսի 16-ից Կ. Պոլսից
ստացած հեռագրի մէջ ասված է հետեւեալը:
«Թիւրքաց մինիստրների խորհուրդը քննում էր
Արեւելիս-փաշայի, արտաքին գործերի նոր
մինիստրի նախագիծը Հայաստանի վերաբերու-
թեամբ: Արեւելիս-փաշան դեռ նորերումս Հայաս-
տանի նահանգապետ է: Նախագիծը բոլոր հայ-
կական ցամաքը բաժանում է նա հիւսիս և ար-
և (նահանգներ) կամ կանտոնների վրա, զիստա-
քաղաքները միմեանցից ոչ հեռու բան երկու
ժամով: Հեռաւորութեան վրա են գտնվում:
Կանտոնի (գաւառի) մէջ կընտրվի կանտոնի
ազգաբնակչութեան մեծամասնութիւնից: Նա
երկու խորհրդատուներ կունենայ, որոնք փոք-
րամասնութիւնից կընտրվեն, և նա կը կա-
տարէ հաշտարար դատաւորի պաշտօնը: Նա
կունենայ չորս քրիստոնէայ ժանդարմներ և
երկու մահմետական ժանդարմներ, եթէ մե-
ծամասնութիւնը քրիստոնէաներն են կազ-
մում, և ընդհակառակն, եթէ մեծամասնու-
թիւնը մահմետականներն են կազմում:

Քրիստոնէաներից և մահմետականներից
բաղկացած խառն դատարան կը հիմնվի:
Այդ դատարանը մէկ որոշեալ տեղ հաստատ-
ված չի լինի, այլ նա նահայից նահա կը
տեղափոխվի և կը սկսի ապրիլիցիական կար-
գով մէրներն տուած վճիռները քննել: Հաւա-
տացնում են, որ մինիստրներն խորհուրդը
սկզբունքով ընդունեց այդ նախագիծը:

ՅԲԱՆՍԻԱ

«ГОЛОСЪ» լրագրի մէջ տպված է հետեւեալ
թղթակցութիւնը Փարիզից:
«Բանի որ հասարակական կարծիքը Փարի-
զում զբաղված է կոմունարներին ընդհանուր
ներուստ շնորհելու հարցով և սպառնում լու-
նիսի 29-ի անցքերին, ազգային լուսաւորու-
թեան մինիստրութեան համեստ դաշնից
մէջ իւրաքանչիւր օր նիստեր է ունենում
նոր ընտրած բարձրագոյն ուսումնարանական
խորհուրդը: Հասարակութեան համար ան-
նշմարելի կերպով ամենայն օր այդ խոր-
հուրդը այնպիսի հարցեր է վճռում, որոնք
մեծ նշանակութիւն կունենան Պրանսիայի
ապագայի համար:

Չը նայելով, որ ուսումնարանական խոր-
հուրդի անդամներն ընտրութիւնները չա-
փազանց բաղադրված են, այնուամենայնիւ
վերջին ընտրութիւնները շատ աջող հետե-
ւանքներ ունեցան: Այդ խորհրդի անդամ
ընտրվեցաւ իւրաքանչիւր մարդ, որ Պրանսիա-
յում մանկավարժութեան մէջ յայտնի է:
Այսպիսով զանազան ուղղութիւնների և հա-
մոզմունքների տէր մարդիկ միջոց ունեն խոր-
հուրդի մէջ անձամբ պաշտպանել իրանց հա-
յեացքները և կարծիքները:

Հէնց որ խորհրդի անդամներն ընտրու-
թիւնները վերջացան, իսկայն խորհուրդը հը-
րաւիրվեցաւ նիստեր կայացնել, որոնք արդէն
երեք շաբաթ տևում են: Խորհուրդը զբա-
ղեցնող ամենանշանաւոր հարցերից գիմնա-

դիական դաստաւութեան վերանորոգութեան
և վերջնական ընտրութեան հարցերն էին:
Այդ հարցերին վերաբերեալ աշխատանքները
արդէն վերջացած են և ես հարկաւոր եմ
համարում կարճատեւ հարցերի այն փոփո-
խութիւնները, որոնց խորհուրդը զննեց
մտցնել դաստաւութեան մէջ:

Ամենից առաջ քննվեցաւ հին լեզուների
դաստաւութեան վերանորոգութեան հարցը:
Հին լեզուների դաստաւութեան այժմեան
ձևը մի և նոյն ժամանակ շատ հսկառակոր-
դներ և շատ պաշտպաններ ունեցաւ: Հին
լեզուների պատճառով խորհուրդի մէջ եղած
վիճարանութիւնները զլիաշաղկապ վերա-
բերվում էին դաստաւութեան երկու կողմե-
րին. առաջին՝ հին լեզուների ուսումնասիրե-
լու և հետեւապէս նրանց դաստաւութեան
սկսելու ժամանակը և երկրորդ՝ դաստաւու-
թեան եղանակը: Նիչ կը վերսրերի դասա-
ւութեանը, խորհուրդը այն զլիաւոր փո-
փոխութիւնը արաւ, որ դաստաւութիւնը
հիմնովի քերականութեան և կրօնիկների ու-
սումնասիրութեան վրա: Ուսանաւորներն և
ձառեր հեղինակներն վարժողութիւնները բո-
լորովին ոչնչացած են, իսկ այդ գործի հա-
մար Պրանսիայի ուսանողները բաւական ժա-
մանակ էին կորցնում: Այդ փոփոխութեան
համեմատ քննութիւններն ժամանակ ուշա-
գրութիւն կը դարձնի կրօնիկների հետ ծա-
նօթ լինելու և նրանց ազատ թարգմանելու
վրա:

Չափազանց տաք վիճարանութիւններ ե-
ղան այն հարցի առթիւ, թէ որ դաստաւու-
նից պէտք է սկսել հին լեզուների դասա-
ւութիւնը: Խորհուրդի այն անդամները, ո-
րոնք ցանկանում էին փչացնել հին լեզուներ-
ի դաստաւութեան ժամանակամիջոցը, պըն-
դում էին, որ լատինական լեզուի դաստաւու-
թիւնը հինգերորդ դաստաւանից սկսվի, իսկ
յունականները վեցերորդից: Այդ հարցի
պատճառով այն վճիռը կայացաւ, որ լատի-
նական դաստաւութիւնը վեցերորդ դասա-
ւանից սկսվի, իսկ յունականները հինգերոր-
դից:

Այդ լեզուներին նուիրված ժամերի թիւն
էլ պակասեցրած է:

Այսպիսով այդ լեզուների ուսումնասիրու-
թեանց թիւթեացած աշակերտները միջոց
ունեն միւս առարկաների վրա աւելի մեծ
ուշադրութիւն դարձնել:

Փարիզից ստացված հեռագիրը հարցրեց,
որ մինիստր Պրէսիին պատգամաւորներին ժո-
ղովին օրէնքի մի նախագիծ առաջարկեց կո-
մունարներին կատարեալ ներուստ շնորհելու
և քաղաքական իրաւունքների վերադարձնե-
լու մասին: Պատգամաւորների ժողովը այդ
առաջարկութիւնը ծափահարութիւններով
ընդունեց և վճռեց անյապաղ քննել օրէնքը:

«ՄԵԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

Ս. ՊԵՏԵՐԲՈՐԳ, 17 յունիսի: Լուր կայ,
որ կամաւոր նաւատորմի բոլոր նաւերը սեպ-
տեմբեր ամսին կը միանան Ձիւնական երկրում
Լեւոսովու նաւատորմի հետ և կը բարձրաց-
նեն պատերազմական դրօշակ: Հաւատացնում
են, որ Ձիւնական նոր դեպքան մարկիզ Յէնզ
բոլորովին չի գայ Ս. Պետերբուրգ:

ԲԵՐԼԻՆ, 17 յունիսի: Նրէկ կոնֆերենցիան
միաձայն ընդունեց Պրանսիական զեապանի
ծրագրերը, որպէս իր վերջնական վճիռ: Նոր
յոյն-թիւրքաց սահմանի զիծը կը սկսվի
Մայիս-Եւսոս դատարանի արեւելեան կող-
մից, կանցնի Օլիմպի և Պինդի սարերի ամենա-
բարձր գագաթների վրայով, կը հասնի Կա-
լամի գետին Կանսայաբալի մօտ և կը շարու-
նակվի այդ գետի ընթացքով մինչև նրա
երանք: Զաքորիցի վիճակը կը մնայ Թիւր-
քիային:

Ս. ՊԵՏԵՐԲՈՐԳ, 17 յունիսի: Պետական բան-
կի 5% տոմսակը առաջին շրջանի արժէ
93 ռ. 50 Կ., երկրորդ 92 ռ., երրորդ 93 ռ.
50 Կ., չորրորդ 93 ռ., ներքին առաջին 5%
փոխառութեան տոմսակը 231 ռ. 50 Կ.,
երկրորդ 225 ռ., արեւելեան առաջին 91 ռ.
75 Կ., երկրորդ 91 ռ. 50 Կ., ոսկի 7 ռ. 65
Կ.: Պետաց մի բուրլ Եւսոսի վրա արժէ
25¹⁰/₃₂ պէնս, առաջ 100 բուրլ Բերլինի
վրա արժէ 129 մարկ 25 պէնս, Համբուրգի
վրա 219 մարկ, Փարիզի վրա 269 Ֆր. 25
սանտիմ: Բօրսայի արամադրութիւնը հաւա-
գիտ է:

Խմբագիր—հրատարակող ԳԻՐԳՈՐ ԱՐՄԵՐՈՒՆԻ

